Քաղաքականության հետազոտություն իրականացնելու համար վերլուծության պլանների կազմում

Ռեյմոնդ Սթրայք

Վերլուծության պլանի սահմանում

Վերլուծության պլանը վարկածները ստուգելու կամ հիմնախնդիրն այլ կերպ վերլուծելու համար ձեր տվյալներն օգտագործելու գործողությունների քայլ առ քայլ ծրագիր է՝

վերլուծության ենթակա խնդիրը սահմանելուց և տվյալների աղբյուրը նախապես բացահայտելուց հետո:

Քաղաքականության հետազոտության ծրագրի իրականացման տիպիկ (ոչ ամբողջական) հաջորդականություն

1. Սահմանեք հիմնախնդիրը
2. Բացահայտեք տվյալները՝ ներառյալ ընտրանքային հետազոտության պլանի ու հարցաթերթերի կազմում (անհրաժեշտության դեպքում)
3. Հավաքեք տվյալներ
4. Կատարեք վերլուծություն
5. Գրեք հաշվետվություն

Վերլուծության իրականացման հաջորդականություն

1. Սահմանեք հիմնախնդիրը՝ ներառյալ վարկածների ձևակերպում
2. Գրականության ուսումնասիրություն
3. Բացահայտեք տվյալները՝ ներառյալ ընտրանքային հետազոտության պլանի ու հարցաթերթերի կազմում (անհրաժեշտության դեպքում)
4. Մշակեք վերլուծության պլան՝ սահմանեք փոփոխականները և վերլուծության մեթոդները
5. Վերանայեք տվյալնների հայթայթման պլանը
6. Հավաքեք տվյալներ
7. Կատարեք վերլուծություն՝ օգտագործելով վերլուծության պլանը
8. Գրեք հաշվետվություն

Ինչո՞ւ է անհրաժեշտ գրականության ուսումնասիրությունը:

- Գաղափարներ և ուղեցույցներ՝ հետազոտական հարցերը ձևակերպելու համար,
- ավելի լայն համատեքստը հասկանալու համար,
- ուսումնասիրելու համար, թե այլ հետազատողներն ինչպես են մոտենում վերլուծությանը, ինչ հատուկ մեթոդներ, վիճակագրական մեթոդներ են կիրառում,
- վերլուծությունն այնպիսի որակական մակարդակում նախապատրաստելու համար, որ այն ներկայացվի այլ անձանց՝ համակողմանի վերանայման նպատակով:

www.scholar.google.com

Վերլուծության պլանը՝

- Ճանապարհային քարտեզ է
- Խնդրի համակարգված և համակողմանի լուծման քայլ առ քայլ պլան է:

Իտերատիվ (կրկնվող) գործընթաց

Ուսումնասիրության ենթակա խնդիրը և վարկածները բացահայտելուց հետո՝

- Բացահայտեք անհրաժեշտ տվյալները՝ ներառյալ մշակեք ընտրանքային հետազոտության պլան և հարցաթերթեր, եթե նախատեսվում է անցկացնել հարցումներ: *Հստակեցրեք, յուրաքանչյուր տվյալի աղբյուրը:*
- Մշակեք վերլուծության պլան՝ սահմանեք փոփոխականները և վերլուծության մեթոդները
  - փոփոխականներ = տվյալներ, որոնք հնարավոր է վերափոխվել են այս վերլուծության համար (միջանկյալ խմբերում արձանագրված թվեր)
- *Ձևակերպեք վերլուծության ենթակա հարցերը և նախատեսվող վերլուծության նկարագիրը*
- Բացահայտեք տվյալների ճեղքվածքները/բացերը:
- Անհրաժեշտության դեպքում, վերանայեք տվյալների հայթայթման պլանը և հնարավոր է նաև՝ վերլուծության պլանը:

Երկու մոտեցում, որոնք սովորաբար կիրառվում են հիմնախնդրի քաղաքականության վերլուծություն կատարելու համար

Տրամաբանական աղյուսակ կամ տրամաբանական շրջանակ

Ավանդական մոտեցում, որը լայնորեն կիրառվում է աշխատանքային ծրագիր մշակելու և ծրագրի իրականացման առաջընթացին հետևելու համար: Տարիների ընթացքում մշակվել են այս մոտեցման բազմաթիվ տարբերակներ:

«Փոփոխության տեսություն» մոտեցում

Մեծ շեշտադրում է արվում ծրագրի իրականացման գործողությունները դրա նպատակների իրագործման հետ կապելու վրա:

Ներկայումս այս մոտեցումն առավել տարածված է:

Կուսումնասիրենք այս երկու մեթոդների կիրառությունը:

Տրամաբանական աղյուսակ

Նպատակ	Գործողություններ	Ցուցանիշներ	Տվյալների աղբյուր

Դեպքի ուսումնասիրություն. Հաճախորդների զոհունակությունը Ռուսաստանի բնակարանային նպաստների (փոխհատուցման) ծրագրի իրականացումից

Ինչո՞ւ է կարևորվում հաճախորդների գոհունակությունը հանրային ծառայության ծրագրից

- Ծրագրի նկատմամբ վստահելիությունը
- Ազդեցությունը մասնակցության տոկոսների վրա՝ ուղղակի և անուղղակի
- Ավելի լայն տեսանկյունից, սա ծառայության ասպեկտ է, որը քիչ ուշադրության է արժանացել տարածաշրջանում:

Բնակարանային նպաստների (ԲՆ) ծրագրի հիմունքները

- Մեկնարկել է 1994 թվականին. միջոցները փորձարկված են:
- Ըստ էության, բնակարանի սեփականության իրավունք ունեցող բոլոր խմբերը ներկայումս իրավասու են մասնակցել ծրագրին:
- Վարչարարության համար պատասխանատու տեղական մարմիններ՝ գործելակերպերը խիստ տարբեր են, ինչը կարող է ազդել մասնակցության տոկոսների վրա:

Ծրագիր - 2

- Ծրագիրը կիրառում է ուղղակի միջոցների փորձարկում
- Նպաստի հաշվարկման բանաձևը՝
  - P = MSR – tY, որտեղ՝
  - P՝ վճարում,
  - MSR՝ վարձավճար և կոմունալ ծառայությունների վճարներ՝ տվյալ տնային տնտեսությանը համապատասխանող միավորի հաշվարկով,
  - t՝ եկամտի այն մասը, որը տնային տնտեսությունը կարող է ողջամտորեն ծախսել բնակարանային ծախսերը հոգալու համար:
  - Y՝ տնային տնտեսության եկամուտ:

Տրամբանական աղյուսակի հիմնական տարրերը

Խնդիրները՝ տեղական ԲՆԿ-երը (HAOs) ապահովում են գրանցման արդյունավետ ծառայություններ. Հաճախորդները գոհ են փորձից

Ընդհանուր խնդիրները հաշվի են առնված.

- Ինչպե՞ս են տարբեր շրջաններում բնակվող հաճախորդները գնահատում իրենց փորձը:
- Ի՞նչով են բացատրվում գնահատականները: Օրինակ՝ ժամանակը, որը դիմողը ծախսում է դիմումն ընդունող աշխատակցի ընդունելությանը սպասելու համար:
- Ի՞նչով են բացատրվում պատասխանատու մարմինների կատարողականների միջև տարբերությունները:

Ռուսաստանի ԲՆ ծրագրի տրամաբանական աղյուսակ. հաճախորդների գոհունակության սումնասիրություն -1

Ծրագրի նպատակ	Ուսումնասիրության ենթակա գործունեություն	Ցուցանիշ	Տվյալների աղբյուր
Բնակարանային նպաստների տեղական գրասենյակը (ԲՆԳ) ապահովում է դիմող անձանց ծրագրում ընդգրկելու արդյունավետ ծառայություններ Հաճախորդները գոհ են ծառայությունից	1. ԲՆԳ այցելելու դյուրինություն	ԲՆ գրասենյակը նշանակու՞մ է այցելությունների համար ժամեր: Գտնվելու վայրը հարմա՞ր է:	Այցելություն գրասենյակ: Ստուգել հասարակական տրանսպորտի հասանելիությունը:
	2. Դիմողների պատրաստվածությունը, երբ նրանք այցելում են ԲՆԳ՝ ծրագրին դիմելու համար:	Արդյո՞ք պատրաստակամորեն են տրամադրվում տեղեկություններ այն մասին, թե ինչ փաստաթղթեր պետք է իրենց հետ բերեն դիմողները:	Այցելություն գրասենյակ՝ արդյո՞ք տեղեկությունների ստացումը դյուրին է:
		-- Արդյո՞ք բացատրական նյութերը հեշտ հասանելի են ԲՆԳ-ում:	Այցելություն գրասենյակ:
		-- Արդյո՞ք ԲՆԳ-ը պարբերաբար գովազդներ է տեղադրում տեղական թերթում կամ հեռուստաալիքում:	Այցելություններ ԲՆԳ և տեղական լրատվամիջոցներ:
		Քանի՞ անգամ է հաճախորդը այցելում ԲՆԳ՝ նախքան բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելը:	Հարցում դիմողների շրջանում:

Ռուսաստանի ԲՆ ծրագրի տրամաբանական աղյուսակ. հաճախորդների գոհունակության ուսումնասիրություն -2

Ծրագրի նպատակ	Ուսումնասիրության ենթակա գործունեություն	Ցուցանիշ	Տվյալների աղբյուր
	3. Դիմումում պահանջվող տեղեկությունները հավաքելու համար անհրաժեշտ ջանքեր:	-- Որքա՞ն ժամանակ են դիմողները ծախսում ԲՆԳ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը հավաքելու համար:	Դիմողների հարցում
Բնակարանային նպաստների տեղական գրասենյակը (ԲՆԳ) ապահովում է դիմող անձանց ծրագրում ընդգրկելու արդյունավետ ծառայություններ:		-- Քանի՞ գրասենյակ պետք է դիմողներն այցելեն, որպեսզի ստանան պահանջվող փաստաթղթերը:	Դիմողների հարցում
Հաճախորդները գոհ են ծառայությունից:	4. Այցելությունից ստացված փորձ	-- Դիմելու հարմարավետություն: ԲՆԳ-ի ընդունելության ժամեր՝ շաբաթական քանի՞ օր:	Այցելություն գրասենյակ
		-- Որքա՞ն ժամանակ է ծախսվում ընդունելիությանը սպասելու համար: Քանի՞ պաշտոնյայի հետ է դիմողը հանդիպում:	Դիմողների հարցում
		-- Բոլոր այցերի ընթացքում բոլոր պաշտոնյաներին հանդիպելու համար ընդհանուր	Դիմողների հարցում

Հավաքված տվյալներ

- Մի քանի միմյանցից բավականին տարբեր, շրջանների 5 քաղաքների՝ տվյալներ
- Հավաքված տեղեկություններ
  - Ծրագրի պարամետրերը (MSR, t), վերջին տարիների փոփոխությունները, որոնք ազդել են նպաստների չափի վրա:
  - Տեղեկություններ ԲՆԳ-ների վարչական գործելակերպերի մասին:
  - Սպասարկվող շրջանում տնային տնտեսությունների պատահական ընտրանքով հարցում՝ ծրագրի տեղեկացվածության, մասնակցելու իրավասության, ծրագրի համբավի մասին տեղեկություններ հավաքելու նպատակով: Սա կարևոր է մասնակցության տոկոսները գնահատելու համար:
  - Լրացուցիչ հարցեր ծրագրի մասնակիցների համար:

Եզրակացություններ

- Չհուսադրող արդյունքներ
  - Ընդունող աշխատակցի հետ 28 րոպե տևողությամբ հանդիպմանը սպասելու համար միջինում ծախսվում է 3 ժամ:
  - Զգալի տատանումներ քաղաքների միջև:
- Հնարավոր է, որ ազդել են մասնակցության վրա. համազգային մակարդակով ցածր մասնակցություն՝ ~13 տոկոս:
- Մարզային իշխանությունների կողմից ստանդարտների սահմանման ու վերահսկման, ինչպես նաև համապատասխան վերապատրաստման ակնհայտ անհրաժեշտություն:

Տրամաբանական աղյուսակ. վարժություն

Հունգարիայի Զաբոշ քաղաքի ավտոբուսային երթևեկության սակագների բարեփոխման գնահատում

Վարժություն լսարանում

Զաբոշ քաղաքում ավտոբուսով երթևեկելու նպաստ տարեցներին

- Ավանդաբար, նախորդ տարիներին տարեցների երթևեկությունն ավտոբուսով միշտ եղել է անվճար: Նպաստները բաշխվում էին անհավասարաչափ՝ ավտոբուսային երթուղիների սահմանափակ լինելու և թուլակազմ տարեցների կողմից համակարգից օգտվելու դժվարության պատճառով:
- Քաղաքային իշխանությունն ավտոբուսային ընկերությանը վճարում էր տարեկան $14 դոլար յուրաքանչյուր տարեց մարդու համար, այն հաշվարկով, որ նա կատարում է ամսական 24 ուղևորություն (12՝ հետադարձով). ավտոբուսի տոմսի արժեքը՝ $.05:
- Նոր քաղաքապետը վերացրեց այդ նպաստը՝ վերջ դնելով անվճար ծառայությանը և փոխարենը յուրաքանչյուր տարեց անձին տարեկան վճարելով $12: Արդյունքում, քաղաքը խնայում է գումար, իսկ տարեցներին տրվում է երթևեկելու ավելի լայն ընտրություն:
- Տաքսիով երթևեկելու միջին գինը՝ $.10:

Ձեր առաջադրանքը

- Նոր համակարգի գործարկումից վեց ամիս անց ձեզ հանձնարարվում է գնահատել, թե արդյո՞ք տարեցներն օգուտ են քաղել այդ փոփոխությունից, թե՝ ոչ:
- Դուք ունեք հարցումներ կատարելու համար նախատեսված բյուջե և ավտոբուսային ընկերությանը հասցեագրված քաղաքապետի նամակը, որով նա խնդրում է տրամադրել ձեզ անհրաժեշտ բոլոր տվյալները:
- Սկսեք ձեր աշխատանքը տրամաբանական աղյուսակի կազմումից:

Առաջադրանքի կազմակերպում

- Որոշ հուշումներ համապատասխան ազդեցությունները բացահայտելու համար: Հաշվի առեք ազդեցությունները բավարար եկամուտ ունեցող և չունեցող տարեցների վրա, այն տարեցների, ովքեր բնակվում են ավտոբուսի կանգառին մոտ և հեռու, տարեցներ, ովքեր ունեն ցանկացած հեռավորության վրա քայլելու սահմանափակ ունակություն՝ մյուսների համեմատությամբ, և այն հանգամանքը, թե արդյոք տարեց անձանց ընտանիքի անդամները կամ այլ անձինք երբեմն ապահովում են նրանց տեղաշարժն ավտոմեքենայով:
- Յուրաքանչյուրի մասով կարող են լինել բազմաթիվ ցուցանիշներ:
- Լոգիստիկա
  - Մասնակիցները բաժանվում են խմբերի՝ առանձին «Zoom» լսարաններում: Դուք պետք է ընտրեք խմբի ղեկավարին և պրեզենտացիան ներկայացնող անձին:
  - Օգտագործեք «Analysis Plans: in-class charts» թղթապանակում առկա ձևաթուղթը, որը դուք ներբեռնել եք ծրագրի վեբ-կայքից:
  - Ձեզ տրվում է 25 րոպե ժամանակ՝ ծանոթացեք միմյանց հետ, կատարեք առաջադրանքը և ընտրեք խոսնակին:
  - Երկու թիմեր կներկայացնեն իրենց աշխատանքը (յուրաքանչյուրին հատկացվում է 10 րոպե ժամանակ), որից հետո մյուս երկու թիմերը կքննարկեն ներկայացված աշխատանքները՝ 5-10 րոպե:

Զաբոշ քաղաքի տարեցների տրանսպորտի աջակցության ծրագրի տրամաբանական աղյուսակ

Նպատակ	Ցուցանիշներ
Տարեցներին ընձեռել ըստ անհրաժեշտության ճամփորդելու հնարավորություն	
Ճամփորդելու բարելավված փորձ	
1. Օգտվում են տրանսպորտի նախընտրելի տեսակներից	
2. Նոր պայմանավորվածության պայմաններում սպասարկման հետ կապված խնդիրներ	
Եկամտային աջակցություն տարեցներին	
Կոնտեքստային տեղեկություններ	[Անհրաժեշտ է վերլուծության համար, որպեսզի հասկանանք դիտարկվող օրինաչափությունները]

Զաբոշ քաղաքի տարեցների տրանսպորտի աջակցության ծրագրի տրամաբանական աղյուսակ

Նպատակ	Չափման ենթակա երևույթ/ցուցանիշներ
Տարեցներին ընձեռել ըստ անհրաժեշտության ճամփորդելու հնարավորություն	Կատարված ուղևորությունների թվի աճ
Ճամփորդելու բարելավված փորձ	Ուղևորություններ դեպի լրացուցիչ վայրեր՝ տեղաշարժվելու ազատության ավելի մեծ զգացողություն
1. Օգտվում են տրանսպորտի նախընտրելի տեսակներից	Բացի ավտոբուսից, տարեցներն այժմ օգտվում են նաև տաքսի և «Uber» ծառայություններից, ավելի քիչ են օգտագործում ընտանիքի անդամների կողմից տեղաշարժի ապահովման ծառայությունները. ընդհանուր առմամբ, փոփոխություն՝ մոդալ ընտրության մեջ:
2. Նոր պայմանավորվածության պայմաններում սպասարկման հետ կապված խնդիրներ	Ընտանիքի անդամները նվազ պատրաստակամ են ապահովելու տարեց անդամի տեղաշարժն անձնական ավտոմեքենայով: Տաքսի կամ «Uber» պատվիրելու հետ կապված դժվարություններ:
Եկամտային աջակցություն ցածր եկամուտ ունեցող տարեցներին	Տրամադրվող սուբսիդիայի գումարի մի մասը խնայելու հնարավորություն՝ այլ նպատակների համար (օր.՝ սնունդ և այլն):
Կոնտեքստային տեղեկություններ	Ավտոբուսային ծառայության հասանելիություն՝ հեռավորությունը մինչև ամենամոտ կանգառ, արդյոք երթուղիները սպասարկում են հարցվողին հետաքրքրող շրջանները, ավտոբուսից օգտվելու ֆիզիկական սահմանափակումներ, տնային տնտեսության կազմ, անձնական ավտոմեքենայի առկայություն:

«Փոփոխության տեսություն» մոտեցումը

- Ի՞նչ է այս տեսությունը:

Տեսությունը բացատրում է փոփոխության գործընթացը՝ նախանշելով պատճառահետևանքային կապերը նախաձեռնության մեջ սահմանված նպատակի հետ, այսինքն՝ դրա ավելի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները:

Բացահայտված փոփոխությունները կարող են քարտեզագրվել որպես «արդյունքների ուղի»՝ ցույց տալով յուրաքանչյուր արդյունքի տրամաբանական կապը մյուս բոլոր արդյունքների հետ, ինչպես նաև ժամանակագրական հոսքը:

Փոփոխության տեսության աղյուսակ

«in class charts» թղթապանակում գտեք «theory of change chart v2» ֆայլը:

Իրական ծրագրի համար կազմված աղյուսակը 2 էջ է: Սա լավ օրինակ է, որը կարելի է օգտագործել որպես մոդել՝ ձեր սեփական աղյուսակը կազմելու համար:

Նախքան աղյուսակին անդրադառնալը՝ վերհիշեք ենթարդյունքների (outputs) և վերջնարդդրույքների (outcomes) միջև տարբերությունները:

Փոփոխության տեսության օրինակ. «Թափանցիկություն և հաշվետվողականություն» ծրագիրը (TAP)

- TAP-ը կարողությունների զարգացման 5-ամյա ծրագիր էր, որի նպատակն էր զարգացնել քաղաքականությունների մշակման/իրականացման գործընթացներում ակտիվ ՔՀԿ-ների կարողությունները 15 ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում, որպեսզի նրանք կարողանան իրականացնել պետական բյուջեի և ծախսերի կատարողականի մշտադիտարկում՝ հիմնականում սոցիալական ոլորտներում:
- Ծրագրով նախատեսված էր աշխատանք տեղական գործընկերների հետ՝ նրանց վերլուծական հմտությունները և պետական մարմինների հետ հաղորդակցվելու կարողություններն ու կապերը զարգացնելու նպատակով:
- Յուրաքանչյուր գործընկեր սահմանեց քաղաքականության փոփոխության 2 կոնկրետ նպատակ, որոնք էլ դարձան գործընկերներին տեխնիկական աջակցություն տրամադրելու առանցքները:
  - Նայեք «Փոփոխության տեսություն» աղյուսակի առաջին էջը (թղթապանակ՝ «*Analysis Plan-in class charts*», ֆայլ՝ «*Theory of Change V2*»)
  - Աղյուսակում օգտագործվող «**ԱՄԿ» հապավումը նշանակում է Անկախ մոնիթորինգային կազմակերպություն:**

Աղյուսակի սյունակների վերնագրերը, որոնք ցույց են տալիս փոփոխությունների փոխհարաբերությունները

1. Ծրագրային գործունեություն/գործողություններ
2. Գործողություններից ակնկալվող կամ ստացված միջանկյալ արդյունքները
3. Ստացված միջանկյալ արդյունքների ցուցանիշները
4. Վերջնարդյունքներ

Փոփոխության տեսության աղյուսակ
(շարունակություն)

- Այս քննարկման հիմնական առանցքը ծրագրի այն մասն է, որտեղ չափվում է կարողությունների զարգացման միջոցառումների ազդեցությունը:
- Տես՝ «Տեխնիկական աջակցություն» բաժինը, էջ 2: Կարդացեք այն հիմա:
  - Երկու հստակ նպատակներն են՝
    - ԱՄԿ-ների վերլուծական ունակությունները զարգացվել են, և
    - ամրապնդվել են հաղորդակցության կարողությունները, և նրանք ավելի մեծ ազդեցություն ունեն քաղաքականության փոփոխության վրա:
- Բարելավումները չափելու համար փաստացի կիրառվող մեթոդը բավականին նորարար է և արժանի է քննարկման:

Փոփոխության չափումը հիմնական ոլորտներում՝ հետազոտության որակ և հաղորդակցման արդյունավետություն

- Ենթարդյունքներն ընդդեմ վերջնարդյունքների
- **Հարց մասնակիցներին՝** ինչպե՞ս չափել կարողությունների զարգացման գործողությունների <u>վերջնարդյունքներն</u> այս երկու ոլորտներում:
- Ձեռք բարձրացրեք, եթե ունեք վերջնարդյունքների վերաբերյալ ասելիք
- Այստեղ կարող եք նկարագրել, թե ինչպես է ձեր կազմակերպությունը չափում արդյունավետությունը նշված ոլորտներից որևէ մեկում

Փոփոխությունների չափումը հիմնական ոլորտներում — Կրեատիվ ցուցանիշներ

1. Վերլուծական աշխատանքի որակ
   - Աշխատաժողովների և վերլուծական ծրագրերի մենթորինգի ազդեցությունը պետք է արտահայտվի կազմված հաշվետվությունների որակում:
   - Որակավորված փորձագետները գնահատել են 6 հաշվետվություն, որոնք պատրաստվել են ծրագրից մեկ տարի առաջ և ընտրվել են յուրաքանչյուր ՔՀԿ-ի կողմից՝ որպես իրենց լավագույնը, իսկ այնուհետև, դասընթացներին հաջորդող առաջին 6-12 ամիսներին ընտրվել են ևս 6-ը:
   - ՔՀԿ առաջնահերթ ոլորտների բանիմացության չափանիշով ընտրված փորձագետները կիրառել են հաշվետվությունների որակի գնահատման ստանդարտ պրոտոկոլ 3 բաժիններով՝ <u>քաղաքականության հիմնախնդրի սահմանում</u> (ներառյալ՝ հիմնախնդիրը սահմանելու համար համապատասխան գրականության օգտագործում), <u>վերլուծության և հաշվետվության տեխնիկական որակ</u> և <u>քաղաքականության առաջարկությունների որակ:</u>
   - Հին ու նոր հաշվետվությունների համեմատության արդյունքները ցույց տվեցին, որ նորերն ավելի ուժեղ են և, ըստ այդմ, գնահատման բալերի տարբերությունը վիճակագրական առումով զգալի էր:

Կրեատիվ ցուցանիշներ-2

2. Ընկալված ազդեցություն քաղաքականության որոշումների վրա

-- «Քաղաքականության գործընթացներում ներգրավված համայնքի ուսումնասիրություն» ձեռնարկը մշակվել և օգտագործվել է որպես հարցման ուղեցույց շուրջ 40 հարցվողների համար՝ յուրաքանչյուր երկրում, որտեղ գործում էր ծրագիրը:

-- Հարցվողների բացահայտումը կատարվել էր բանիմաց տեղական փորձագետների կողմից, որոնք աշխատում էին քաղաքականության գործընթացներում ներգրավված համայնքում:

-- Հարցվողների ցանկը ներառում էր՝ վերլուծական կենտրոնների փորձագետներ, ներգրավված լրատվամիջոցներ, ԱՄԿ-ի աշխատանքային ոլորտի պատասխանատու բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, պատգամավորներ, ՔՀԿ ներկայացուցիչներ:

-- Հարցումներն անց են կացվել ելակետային փուլում և դրանից 18 ամիս անց: Արդյունքները ներկայացվում են լրացուցիչ նյութերի թղթապանակում: Դրանք հստակ ցույց են տալիս արդյունավետությունն ու բարելավումը:

ՔՀԿ քաղաքականության դաշտում կատարողականի բարելավում՝ կապված TAP-ի գործունեության հետ

Գնահատված ոլորտ	Հարցվողների %-ը, ովքեր գնահատել են. որ որոլտը բարելավվել է տվյալ ժամանակահատվածում
Ընդհանուր արդյունավետություն	
Կազմակերպությունը կենտրոնանում է գերակա խնդիրների վրա	51
Կազմակերպությունը հետազոտության, ներառյալ տվյալների ու վիճակագրության, արժեքավոր աղբյուր է	62
Կազմակերպության կողմից մշակված քաղաքականության առաջարկությունները օգտակար են	62
Կազմակերպության աշխատանքը դրականորեն է ազդում հանրային քաղաքականության կամ վարչարարության վրա	50
Թափանցիկության և հաշվետվողականության հետ կապված խնդիրներ/հարցեր	
Կազմակերպությունն ունի ազդեցություն բյուջեի կազմման գործընթացի վրա ՝ բյուջատային ընտրությունների բաց լինելու, որակի կամ արդարության տեսանկյունից	36
Կազմակերպությունն ունի ազդեցություն հանրային	35

Ձեր կողմից հավաքված տվյալների պատշաճ գործածումը

- Նախորդ բաժիններում կարևորվեցին ցուցանիշների սահմանումը և (անուղղակիորեն) որոշելը, թե ինչպես ձեռք բերել տվյալներ՝ դրանց քանակական արտահայտություն տալու համար:
- Եթե ձեր կողմից մշակված պլանը բավարարում է ձեզ, ապա հիմա ժամանակն է ստուգելու, որ դուք իրականում կարող եք հավաքել ձեր վերլուծության համար անհրաժեշտ տվյալները:
- Մանրամասն նշեք, թե ինչ վերլուծություններ եք նախատեսում կատարել, և ստուգեք դրանց համար հավաքված տվյալների առկայությունը: Արդյո՞ք հավաքվել են տվյալներ բոլոր փոփոխականների մասով:

Ստուգում. տվյալներին ներկայացվող պահանջները տարբեր են՝ կախված նախատեսվող վերլուծության տեսակից

- Ձեզ անհրաժեշտ տվյալների տարրերի թիվը տարբեր է՝ կախված նախատեսվող վերլուծության տեսակից: Ավելի համապարփակ վերլուծության համար կպահանջվեն ավելի շատ տվյալներ:
  - Երկու փոփոխականներով վերլուծությունը (երկու փոփոխականների ներգրավմամբ) պարզ է, չնայած գուցե ցանկանաք ուսումնասիրել փոփոխականների զույգեր:
  - Բազմակի փոփոխականներով վերլուծության համար, ինչպիսին է ռեգրեսիան, հաճախ պահանջում են շատ փոփոխականներ: Ռեգրեսիոն մոդելները հաճախ ունեն բազմաթիվ հնարավոր «վերահսկող» փոփոխականներ:
- *Չափազանց կարևոր է*, որ դուք մշակեք հարցման գործիքները հիմա, որպեսզի կարողանաք փոփոխականների ցանկը համեմատել հարցումների արդյունքում հավաքվող տեղեկությունների հետ: Հնարավոր է, որ ցանկից դուրս թողնվի կարևոր փոփոխական, ինչը կարող է խաթարել վերլուծության արդյունքները:

Տնային առաջադրանք

Յուրաքանչյուր կոնսորցիումի համար՝

- Կատարեք ԵՀՀ-ին ներկայացրած ձեր ծրագրի վերլուծություն՝ փոփոխության տեսության մեթոդով, այն չափով, որքանով կարող եք:
- Պատրաստ եղեք հանդես գալ պրեզենտացիայով՝ 20-րոպե տևողությամբ: Ձեր ծրագրի մասին շատ հակիճ ներածական խոսքից հետո կենտրոնացեք վերլուծության պլանի վրա: **Կիրառեք փոփոխության տեսության 4-այունակով աղյուսակի ձևաչափը**:
- Այնուհետև կկազմակերպվի քննարկում՝ 10-15 րոպե տևողությամբ, որը կվարի կոնսորցիումներից մեկը:
- Մենք կվերսկսենք սեսիան փետրվարի 22-ին:
- Ձեր աղյուսակը (փոփոխության տեսություն) ներկայացրեք ԵՀՀ-ին հաջորդ աշխատաժողովից երեք օր առաջ, որպեսզի այն բաժանվի մյուս կոնսորցիումների անդամներին և թարգմանվի Ռեյի համար:

Պրեզենտացիայի ժամանակացույց. տևողություն

Կոնսորցիում	Պրեզենտացիայի ժամանակը	Քննարկման ժամանակը
1.	16:10 – 16:30	16:30-16:45
2.	16:45-17:05	17:05-17:20
3.	17:20-17:40	17:40-17:55
15 րոպե ընդմիջում	17:55-18:10	
4.	18:10-18:30	18:30-18:45
5.	18:45-19:05	19:05-19:20

Քննարկման առաջադրանքներ

Ներկայացնող	Մեկնաբանող
Աշխատանքային իրավունք	Պետական ծախսեր
Սոցիալ-տնտեսական	Հոգեկան Առողջություն
Պետական ծախսեր	Հանրային անվտանգություն
Հոգեկան Առողջություն	Աշխատանքային իրավունք
Հանրային անվտանգություն	Սոցիալ-տնտեսական

Վերջում, որպես ղեկավար՝

- Խրախուսեք ձեր թիմի լիդերներին, որպեսզի նրանք մշակեն հիմնավոր վերլուծության պլան յուրաքանչյուր ծրագրի համար:
- Վերանայեք պլանները՝ համոզվելու համար, որ բաց չի թողնվել որևէ կարևոր բան՝
  - դիտարկվող իրավիճակից բխող վարկածներ,
  - վարկածները ստուգելու համար անհրաժեշտ տվյալներ,
  - առաջարկվող համապատասխան մեթոդներ:

Տնային աշխատանք. Տրամաբանական շրջանակ – ներկայացման օրը 15-ը փետրվարի

Հաջորդ աշխատաժողով.
15-ը փետրվարի, ժամը 16:00-18:00/February 15, 4pm – 6pm
Բանախոս՝ Դոկտոր Ռեյմոնդ Սթրայք - Speaker: Ray Struyk, Ph.D

Օժանդակ նյութեր և ձևաթղթեր /Supporting materials and forms:
https://urbanfoundation.am/language/hy/international-technical-assistance-for-data-program-armenia-2/

Հաջորդ աշխատաժողով/Next Workshop - Աշխատաժողով 5 - Workshop 5

15-ը փետրվարի, ժամը 16:00-18:00/February 15, 4pm – 6pm
Բանախոս՝ Դոկտոր Ռեյմոնդ Սթրայք - Speaker: Ray Struyk, Ph.D

Օժանդակ նյութեր և ձևաթղթեր /Supporting materials and forms:
https://urbanfoundation.am/language/hy/international-technical-assistance-for-data-program-armenia-2/